ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԳՄ ԱՇՁԲ - 12/25

ք. Գավառ «14» 02 2012թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շանթ-Սեյրան » ՍՊԸ- ն ի դեմս Ընկերության տնօրեն Դ.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել Վերին Գետաշենի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետ է սահմանվում՝ 01.07.2012թ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Սույն պայմանագրում նշված՝ Աշխատանքների կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կապալառուին.

3.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն երկու և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի ապահովման համար սահմանված ժամկետները.

3.1.6 Առանց կատարված աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.8 Աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 5 (հինգ) տարվա ընթացքում, Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.1.9 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքների իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.10 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքները կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքները դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1 Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված գրաֆիկով: Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացվող, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

4.1.1 Աշխատանքի կատարման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Պատվիրատուն Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 40 օրվա ընթացքում Կապալառուին է ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.5 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 34702570.0 (երեսունչորս միլիոն յոթ հարյուր երկու հազար հինգ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, որից 5783762.0 (հինգ միլիոն յոթ հարյուր ութսուներեք հազար յոթ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն այդ թվում

5.1.1. Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, սակայն ոչ ուշ քան մինչև 01-ը սեպտեմբերի 2012թ., պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված՝ Աշխատանքի առանձին փուլերի և ծավալների գները ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում: Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի կատարման արդյունքում Կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է Կողմերի միջև՝ հավասարաչափ:

5.4 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարներից:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը (կապալառուն, մատակարարը) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին (կապալառուին, մատակարարին) հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ

որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի, մատակարարի) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը (կապալառուն, մատակարարը) պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.6 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Հասցե՝ ք. Գավառ Գր. Լուսավորչի 36
Հ/Հ 900171078661
Գավառի ՏԳԲ
ՀՎՀՀ 08404767

ստորագրություն

Կապալառու
«Շանթ-Սեյրան» ՍՊԸ,
գ.Վ.Գետաշեն
«ԱՇԻԲ» ՓԲԸ Մարտունի մ/ճ
հ/հ 247660051811
ՀՎՀՀ 08205134

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 1
«14» 02 2012թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀ ԳՄ ԱՀՋԲ-12/25» գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վ. Գետաշեն համայնքի մանկապարտեզի հիմնանորոգում

ՀՀ	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Միավորի ծախսը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Առաստաղի գաջե սվաղի քանդում	մ2	41.50	1000	41500.0
2	Պատերից գաջե սվաղի քանդում	մ2	82.10	1000	82100.0
3	Պատերի ցեմենտյա սվաղի քանդում	100մ2	0.775	50000	38750.0
4	Հատակի մարատախտակյա ծածկի և շրիշակների քանդում	100քմ	0.393	80000	31440.0
5	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտի քանդում 117,8Х0,03	խմ	3.53	25000	88250.0
6	Պատերի հախճասալերի քանդում	քմ	35.00	2000	70000.0
7	Պատերի և առաստաղի հին ներկի և պաստառի մաքրում և հարթեցնում	100քմ	6.21	100000	621000.0
8	Կերամիկական հատակի քանդում	քմ	12.90	3000	38700.0
9	Անցքերի շաղափում քարե պատերում գայլակոնիչով 50սմ խորությամբ	100հատ	0.08	100000	8000.0
10	Շին աղբի հավաքում և տեղափոխում բարձելու համար	տն	16.70	5000	83500.0
11	Շին աղբի բարձում և տեղափոխում 2 կմ վրա	տն	16.70	5000	83500.0
	Հատակներ				0.0
1	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	քմ	117.80	5000	589000.0
2	Մանրատախտակյա հատակների նորոգում	քմ	30.80	1500	46200.0
3	Մանրահատակ հատակների հղկում	քմ	308.30	1000	308300.0
4	Հատակի ծածկ լամինատից շրիշակների հետ միասին սպունգով և շրիշակներով 8մմ հաստ.	քմ	308.30	7000	2158100.0
5	Հատակի ծածկ կերամիկական սալիկներից	քմ	12.90	5000	64500.0
6	Հատակի ծածկ մամլագրանիտե սալիկներից	քմ	104.90	5000	524500.0
7	Աստիճաների երեսապատում մամլագրանիտե սալիկներից	քմ	45.00	5000	225000.0
8	Շրիշակների պատրաստում մամլագրանիտե սալիկներից	քմ	13.50	4000	54000.0
9	Մետաղական բազրիկների նորոգում տեղում	մ	25.30	3000	75900.0
10	Մետաղական բազրիկների յուղաներկում	քմ	22.00	1000	22000.0
	Հարդարման աշխատանքներ				0.0
1	Առաստաղների գաջե բարձրորակ սվաղ	100քմ	0.415	500000	207500.0
2	Պատերի գաջե բարձրորակ սվաղ	100քմ	0.821	500000	410500.0
3	Պատերի լավորակ ցեմենտյա սվաղ	մ2	75.50	5000	377500.0
4	Պատերի երեսապատում հաղճասալերով	մ2	35.00	6000	210000.0
5	Պատերի բարձրորակ ներկում լատեքս ներկով	100քմ	8.214	300000	2464200.0
6	Առաստաղների բարձրորակ ներկում լատեքս ներկով	100մ2	4.156	300000	1246800.0

7	շեպերի բարձրորակ ներկում լատեքս ներկով	100քմ	0.676	300000	202800.0
8	Պատերի ներկում ջրակայուն ներկով	100մ2	0.400	300000	120000.0
9	Կախովի առաստաղի իրականացում պլաստմասե սալերով	քմ	12.900	10000	129000.0
	Ջեռուցում և օդափոխություն				0.0
1	Ջեռուցման Q-28կվտ պատի կաթսայի մոնտաժում ծխատարի տեղադրմամբ	կ-տ	2.00	400000	800000.0
2	Ալյումինե սեկցիոն ջեռուցման մարտկոցների մոնտաժում h=500մմ	էկմ	61.60	20000	1232000.0
3	Մարտկոցի միացման հանգույց	կ-տ	34.00	2000	68000.0
4	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Ֆ=20x2	մ	100.00	400	40000.0
5	Նույնը Ֆ=25x2,3	մ	125.00	500	62500.0
6	Նույնը Ֆ=32	մ	120.00	700	84000.0
7	Կարգավորիչ փական Φ=15մմ	հատ	34.00	1000	34000.0
8	Խցանող փական Φ=15մմ	հատ	34.00	1000	34000.0
9	Դատարկման փական Φ=15մմ	հատ	8.00	1000	8000.0
10	Գնդիկային փական 25մմ	հատ	16.00	1200	19200.0
11	Գնդիկային փական 15մմ	հատ	4.00	1000	4000.0
12	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր Φ=20մմ	հատ	300.00	300	90000.0
13	Խողովակաշարի հիդրավլիկ փորձարկում	100մ	3.45	50000	172500.0
14	Անցքերի շաղափում քարե պատերում գայլակոնիչով 50սմ խորությամբ	100հատ	0.08	100000	8000.0
15	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտի քանդում և վերականգնում 30մմ հաստ.	քմ	3.000	5000	15000.0
	Արտաքին կոյուղագիծ	մԱ			0.0
1	Բնահողի քանդում խրամուղում 4-րդ կարգի գրունտներում էքսկավատորով 0,5խմ կողլիցք	1000խմ	0.029	1500000	43500.0
2	4-րդ կարգի գրունտի քանդում խրամուղում ձեռքով	խմ	2.70	5000	13500.0
3	Ավազե նախապատրաստական շերտ նոր խողովակաշարի տակ	խմ	2.20	6000	13200.0
4	Տեղադրել պոլիէթիլենային խողովակ Φ=160x4,9մմ փորձարկումով	մ	44.70	6000	268200.0
5	Կոյուղու դիտահոր հավաքովի ե/բետոնյա կոնստրուկցիաներից Դ=1մ	խմ	2.24	30000	67200.0
6	Դիտահորի մաս Φ=1000մմ	հատ	2.00	50000	100000.0
7	ե/բ ծածկի սալ 1,2x1,2 թուջե մտոցով	հատ	2.00	10000	20000.0
8	միացում կառուցվող կեղտաջրերի հավաքման հորին	տեղ	1.00	10000	10000.0
9	Քանդած բնահողի հետլիցք բուլդոզերով	1000խմ	0.029	1000000	29000.0
10	Հողի հետլիցքի տոփանում պնևմոտոփանիչներով	100խմ	0.29	50000	14500.0
11	3-րդ կարգի գրունտի ետլիցք ձեռքով և տոփանում	խմ	2.70	3000	8100.0
	Սանտեխնիկական աշխատանքներ				
	Ներքին ջրամատակարարման ցանց				
1	Մետաղապլաստե խողովակների մոնտաժում Ֆ=16	մ	19.00	400	7600.0
2	Արույրե փական 15մմ	հատ	9.00	1000	9000.0
3	Մետաղապլաստե խողովակների ձևավոր մասեր	հատ	18.00	300	5400.0

4	Ջրի զտիչի տեղադրում Φ=20մմ	հատ	1.00	1500	1500.0
5	Լվացարանի համար խառնիչ	հատ	2.00	3000	6000.0
6	Խողովակաշարի հիդրավլիկ փորձարկում	100մ	0.19	100000	19000.0
7	Միացում գործող ջրագծին Φ=20մմ	տեղ	1.00	15000	15000.0
8	Անցքերի բացում պատերի մեջ 300x300մմ	հատ	5.00	1500	7500.0
9	Անցքերի բացում միջհարկային ծածկերում 100x100	հատ	4.00	1500	6000.0
10	Անցքերի փակում բետոնով	խմ	0.12	80000	9600.0
	Ներքին կոյուղի				0.0
1	Կոյուղու պոլիէթիլենային խողովակների տեղադրում Φ=50մմ	մ	15.00	1000	15000.0
2	Նույնը Φ=110մմ	մ	71.90	1500	107850.0
3	Կոյուղու ճևավոր մասեր d=50մմ պոլիէթիլենային խողովակների համար	հատ	11.00	600	6600.0
4	Կոյուղու ճևավոր մասեր d=100մմ պոլիէթիլենային խողովակների համար	հատ	16.00	600	9600.0
5	Հաղճապակյա զուգարանակոնք ողողման բաքով	կ-տ	2.00	25000	50000.0
6	Հաղճապակյա լվացարանի տեղադրում սիֆոնով	կ-տ	4.00	20000	80000.0
7	Պոլիէթիլենային ստուգիչ Φ=100մմ	հատ	3.00	1500	4500.0
8	Թուջե հոսակ 50մմ	հատ	2.00	3000	6000.0
9	Անցքերի բացում պատերի մեջ 300x300	հատ	4.00	1500	6000.0
10	Անցքերի բացում միջհարկային ծածկերում 100x100	հատ	5.00	1500	7500.0
11	Անցքերի փակում բետոնով	խմ	0.15	80000	12000.0
	էլեկտրամոնտաժային աշխատանքներ				0.0
1	Բաշխիչ վահան ՊՐ11-1060-21Ույ3	հատ	1.00	60000	60000.0
2	Լուսավորության վահան ՕՇՎ-6	հատ	6.00	10000	60000.0
3	Լուստու ջահ առաստաղի 2x60վտ	հատ	104.00	6000	624000.0
4	Վարդակներ փակ լարանցման համար հողանցման հպակով	հատ	85.00	400	34000.0
5	էլ. անջատիչ մեկստեղ փակ լարանցման համար	հատ	54.00	400	21600.0
6	Տուփ վարդակների և անջատիչների համար	հատ	139.00	150	20850.0
7	Նույնը բաշխիչ ցանցի համար	հատ	62.00	150	9300.0
8	Շիկացման էլ. լամպ 60վտ	հատ	208.00	200	41600.0
9	էլ. լարի տեղադրում փակ լարանցման դեպքում ՊՊՎ3x4քմմ	100մ	1.97	250	492.5
10	Նույնը ՊՊՎ 3x2,5քմմ	100մ	6.03	250	1507.5
11	Նույնը ՊՊՎ 2x2,5քմմ	100մ	8.13	250	2032.5
12	Վինեպլաստե սկառների տեղադրում պատերի վրա 40x30մմ	100մ	0.60	20000	12000.0
13	ՎՎԳ4x10քմմ մալուխի տեղադրում սակառներում	100մ	0.58	20000	11600.0
14	Վինեպլաստե սկառների տեղադրում պատերի վրա 60x40մմ	100մ	0.72	25000	18000.0
15	ՎՎԳ4x16քմմ մալուխի տեղադրում սակառներում	100մ	0.99	50000	49500.0
16	4-րդ կարգի հողի փորում խրամուղում ց/լարման մալուխի համար	խմ	12.00	3000	36000.0
17	Հողի ետլիցք ձեռքով	խմ	12.00	2000	24000.0
18	ՊՔՎ Φ=110մմ խողովակների տեղադրում խրամուղում մալուխի համար	մ	34.00	1000	34000.0

19	ՎՎԳ4x16քմմ մալուխի տեղադրում խրամուղում	100մ	0.34	50000	17000.0
20	25x4մմ կտրվ. շերտապողպատ պատի վրայով հողանցման համար	100մ	0.10	100000	10000.0
21	40x4մմ կտրվ. շերտապողպատ խրամուղու մեջ հողանցման համար	100մ	0.20	100000	20000.0
22	50x50x5 պողպատյա անկյունակներից էլեկտրոդներ 2,5 մ հողանցման համար	10 հատ	0.40	100000	40000.0
	Գազամատակարարման աշխատանքներ				0.0
1	Խողովակների վերգետնյա տեղադրում Φ=25մմ	մ	37.10	1500	55650.0
2	Խողովակների պատերին տեղադրում Φ=20մմ	մ	38.70	1500	58050.0
3	Գազատարի խցափակում միացում գործող գծին Φ=20մմ	հատ	1.00	20000	20000.0
4	Անցքերի շաղափում 25մմ հաստութ. պատերի մեջ Φ=40մ	հատ	1.00	2000	2000.0
5	Պատյան պողպատյա խողովակից Φ=40մմ	մ	0.30	1000	300.0
6	Պողպատյա խողովակից հենակներ գազտարի համար Φ=50մմ	մ	21.60	2000	43200.0
7	Մետաղական շինվածքներ գազատարի ամրացման համար	կգ	7.80	2000	15600.0
8	Փական խցանային F=20մմ	հատ	5.00	1000	5000.0
9	Գազատարի փորձարկում	մ	75.80	1000	75800.0
10	GSA-10 տիպի գազի կարգավորիչ հաշվիչ հանգույցով և պահարանով	հատ	1.00	150000	150000.0
11	Խողվակների և կարկասի յուղաներկում երկու անգամ	100քմ	0.084	500000	42000.0
12	4-րդ կարգի հողի փորում փոսորակում ձեռքով հենակների տակ	խմ	0.58	5000	2900.0
13	Հենակների բետոնացում B12,5 բետոնից	խմ	0.58	80000	46400.0
14	3-րդ կարգի հողի ետլիցք ձեռքով	խմ	0.58	3000	1740.0
	Ցանկապատի կառուցում				0.0
1	Հին մետաղական ցանկապատի ապամոնտաժում H=1,1մ	մ	183.30	2000	366600.0
2	Ցանկապատ մետաղական ցանցապատ շրջանակներով Φ=89մմ կանգնակներով H=2մ առանց խարսխապատերի հողային աշխատանքներով	գմ	259.00	4000	1036000.0
3	Ցանկապատի շրջանակների պատրաստում պողպատյա պրոֆիլներից	տն	3.81	400000	1524000.0
4	Ցանցի մոնտաժում շրջանակների կարկասի վրա 50x50x2	100քմ	5.02	180000	903600.0
5	Պողպատյա խողովակ Φ=89x3մմ	մ	318.20	2000	636400.0
6	Պողպատյա անկյունակ L=56x4մմ	մ	993.60	1500	1490400.0
7	ԱմրանՄ=8A1	տն	0.392	500000	196000.0
8	Շերտավոր պողպատ 50x4մմ	մ	86.20	2000	172400.0
9	Մետաղական դարպասների մոնտաժում տարբեր պրոֆիլներից	հատ	2.00	500000	1000000.0
10	Պողպատյա ուղղանկյուն խողովակ 80x80x3	մ	60.66	2000	121320.0
11	Պողպատյա ուղղանկյուն խողովակ 80x40	մ	5.80	2000	11600.0
12	Պողպատյա քառակուսի ձող 12x12մմ	մ	139.20	2000	278400.0
13	Մետաղական ծխնիներ	հատ	8.00	1500	12000.0
14	Կախովի կողպեք	հատ	2.00	2000	4000.0
15	Ցանկապատի և դարպասի մետաղական մասերի յուղաներկում	100քմ	3.26	150000	489000.0
	Կոյուղաջրերի հավաքման հոր				0.0
1	Բնահողի քանդում խրամուղում 4-րդ կարգի գրունտներում էքսկքվատորով 0,5խմ կողլիցք	1000խմ	0.057	3000000	171000.0
2	4-րդ կարգի հողի փորում խրամուղում էքսկավատորով և բարձում	1000խմ	0.059	3000000	177000.0

3	4-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով մեխանիզմից հետո	խմ	1.30	5000	6500.0
4	Ավելացած գրունտի տեղափոխում 2կմ-ի վրա 59x1,85	տն	109.20	1500	163800.0
5	B7,5 դասի բետոնից նախապատրաստական շերտ	խմ	1.30	80000	104000.0
6	Միձույլ ե/բետոնյա հորի պատեր և ծածկեր B15 բետոնից 200մմ հաստ.	խմ	14.60	100000	1460000.0
7	Ամրան Ա-1	տն	0.045	400000	18000.0
8	Ամրան Ա-500c	տն	1.75	400000	700000.0
9	Պատերի ջրամեկուսացում երկու շերտ բիտումե մածիկով	100քմ	0.817	100000	81700.0
10	Հորի կողքերի սվաղ ցեմենտյա շաղախով	քմ	62.10	5900	366390.0
11	Տեղադրել պողպատյա խողովակ Φ=200մմ	մ	0.50	15000	7500.0
12	նույնը Φ=100մմ	մ	1.60	10000	16000.0
13	Քանդած բնահողի հետլիցք բուլդոզերով	1000խմ	0.057	1000000	57000.0
14	Հողի հետլիցքի տոփանում պնևմոտոփանիչներով	100խմ	0.57	50000	28500.0
15	3-րդ կարգի գրունտի ետլիցք ձեռքով և տոփանում	խմ	1.30	3000	3900.0

Ընդամենը	27541723
Շահույթ5%	1377086
Ընդամենը	28918809
ԱԱՀ 20%	5783762
Ընդամենը	34702570

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Հասցե՝ ք. Գավառ Գր. Լուսավորչի 36
Հ/Հ 900171078661
Գավառի ՏԳԲ

ՀՎՀՀ 08404767

(ստորագրություն)

Կ.Տ

Կապալառու
«Շանթ-Սեյրան» ՍՊԸ,
գ.Վ.Գետաշեն
«ԱՇԻԲ» ՓԲԸ Մարտունի մ/ճ
h/h 247660051811
ՀՎՀՀ 08205134

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2
«____» 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀ ԳՄ ԱԾՁԲ -12/25 գնման պայմանագրի

Կապալառու	Պատվիրատու
_____	_____
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____
հհ_____	հհ_____
_____	_____
հվհհ_____	հվհհ_____

ԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2012թ.

Պայմանագրի անվանումը՝ ----------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 2012թ.

Պայմանագրի համարը՝_____.

Պատվիրատուն՝ ի դեմս_____և կապալառուն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 2012թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N_____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված նախագծանախահաշվային փաստաթղթերին և օրացուցային գրաֆիկին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն «_____» «_____» 2012թ-ից «_____» «_____» 2012թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
ազգանուն _____	ազգանուն _____
Կ Տ	Կ Տ

Հավելված թիվ 3
«14» 02 2012թ.
կնքված աշխատանքների կատարման

թիվ «ՀՀ ԳՄ ԱՇՁԲ-12/25» գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազ դրամ

N ը/կ	Աշխատանքների անվանումը	Ֆինանսավորման գումարը ՀՀ 2012թ պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Վերին Գետաշենի մանկապարտեզի հիմնանորոգում		34702.57	34702.57	34702.57	34702.57	34702.57	34702.57	34702.57	34702.57	34702.57	34702.57	34702.57

Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Հասցե՝ ք. Գավառ Գր. Լուսավորչի 36
Հ/Հ 900171078661
Գավառի ՏԳԲ
ՀՎՀՀ [illegible]

ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Շանթ-Սեյրան» ՍՊԸ,
գ.Վ.Գետաշեն
«ԱՇԻԲ» ՓԲԸ Մարտունի մ/ճ
հ/հ 247660051811
ՀՎՀՀ 08205134

(ստորագրություն)
Կ.Տ

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Վերին Գետաշենի մանկապարտեզի հիմնանորոգում աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը (հազ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Վերին Գետաշենի մանկապարտեզի հիմնանորոգում	34702.57	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.07.2012թ
	ԸՆԴԱՄԵՆԸ	34702.57	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.07.2012թ

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Հասցե՝ ք. Գավառ Գր. Լուսավորչի 36
Հ/Հ 900171078661
Գավառի ՏԳԲ
ՀՎՀՀ 08404767

ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Շանթ-Սեյրան» ՍՊԸ,
գ.Վ.Գետաշեն
«ԱՇԻԲ» ՓԲԸ Մարտունի մ/ճ
հ/հ 247660051811
ՀՎՀՀ 08205134

(ստորագրություն)
Կ.Տ